Հրատարակութիւն Թիֆլիսի Հայոց Դիւղատնտ. և Տնայնագործ. Ընկերութեան.

Ն. Պ. ՏԱՐԱՏԻՆՈՎ

ՀԱՄԱՌՕՏ ՑՈՒՑՄՈՒՆՔ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԲԱՄԲԱԿԻ ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Երկրորդ տպագրութիւն

Թարգմ. Ե. Նարինջեանի

633.41
S-26

Թիֆլիս
Տպարան Ընկ. „ՆԱԴԵԺԴԱ“ Բարոնսկի № 14
1915

19.090

633.41
S-26
30 JUL 2010
Հրատարակութիւն Թիֆլիսի Հայոց Գիւղատնտ. և Տնայնագործ. Ընկերութեան.

Ն. Պ. ՏԱՐԱՏԻՆՈՎ

100%/32342

ՀԱՄԱՌՕՏ ՅՈՒՅՄՈՒՆՔ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԲԱՄԲԱԿԻ ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Երկրորդ տպագրութիւն

Թարգմ. Ե. Նարինջեանի

Թիֆլիս
Տպարան Ընկ. «ՆԱԴԵԺԴԱ» Բարոնակի № 14
1915

Մ. Ա. Մասիսյանի անվան

12 AUG 2013

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սրանով մենք տալիս ենք բամբակագործութեան յայտնի մասնագէտ Նիկոլայ Պաւլովիչ Տարատինովի „Краткое наставленіе къ разведенію американскаго хлопчатника въ Закавказьѣ“ գրքոյկի թարգմանութիւնը հարազատօրէն, առանց որև է փոփոխութեան և առարկող ծանօթութիւնների, չնայելով, որ մի քանի խնդիրներում համաձայն չենք նրա կարծիքներին և առաջարկութիւններին։ Մեր արած դիտողութիւնների, կատարած փորձերի և ուսումնասիրութիւնների արդիւնքը թողնելով մօտիկ ապագայում առանձին գրքով հրատարակելու՝ յուսով ենք, որ ներկայ գրքոյկը՝ հարստացնելով բամբակի արդիւնաբերութեամբ զբաղուող հայ երկրագործի աղքատիկ գրադարանը, նրա համար օգտակար ուղեցոյց կծառայի բարելաւելու և թեթևացնելու բամբակի մշակութեան դառն ու ծանր աշխատանքները։

Բամբակագործութեան մասին մեր գիւղատնտեսական գրականութեան մէջ, չհաշուած մասնաւոր լրագրական յօդուածներն այս ու այն թերթերում, գլխաւորապէս «Գիւղատնտեսի» մէջ, հրատարակի վրայ կայ ընդամէնը երկու գրքոյկ,—Ա. Աթանասեանի „Բամբակը և նրա մշակութիւնը“ և Յով. Պետրոսեանի «Ի՞նչպէս բամբակը մշակել“։ Դրանք երկուսն էլ ինքնուրոյն կազմած աշխատութիւններ են և գործնական տեսակէտից ուշադրութեան արժանի. ցանկալի է,

որ բամբակի արդիւնաբերութեամբ պարապող մեր գիւղացիներն ունենան իրանց ձեռքի տակ, թէկուզ հէնց այն պատճառով, որ շատ մատչելի են ամեն կողմից և աւելի կատարեալ ու ընդարձակ աշխատասիրութիւն այդ նիւթի մասին դեռ չունենք. իսկ Ն. Պ. Տարատինովի ներկայ „Համառօտ ցուցմունքը“, որ կազմուած է անտարակոյս շատ աւելի կարող և հմուտ ձեռքով, դալիս է հաստատելու և լրացնելու նրանց սաածներն ու տուած խորհուրդները։

„Համառօտ ցուցմունքի“ ռուսերէն բնագիրն առաջին անգամ լոյս է տեսել 1911 թ. Ապրիլին 1000 օրինակով, որ հէնց նոյն տարին էլ սպառուել է։ Ապա նոյնութեամբ արտատպուել է Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան օրգանում („Кавказское хозяйство“) և այդ տեղից նոյն Ընկերութեան Խորհրդի կարգադրութեամբ արտատպուել է առանձին էլի 1000 օրինակ։ Նոյնպիսի արտատպումն է արել Սուխումի Գիւղատնտեսական Ընկերութիւնը իր թերթում („Черноморскій Селянинъ“)։ Ապա թարգմանուած է վրացերէն, յետոյ գերմաներէն, որ տպուել է Թիֆլիզում հրատարակուող գերմանական «Kaukasishe Post» լրագրում։

Ռուսերէնը երկրորդ հրատարակութեամբ լոյս է տեսել 1912 թ., որից 1913 թ. թարգմանուած է թուրքերէն։

Մենք էլ այժմ տալիս ենք բնագրի երկրորդ հրատարակութեան հայերէն թարգմանութեան երկրորդ հրատարակութիւնը հեղինակի բարեհաճ համաձայնութեամբ։

Ե. ՆԱՐԻՆՋԵԱՆ

1915 թ. մարտի 25-ին
Իգդիր։

ՀԱՄԱՌՕՏ ՑՈՒՑՄՈՒՆՔ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԲԱՄԲԱԿԻ ՄՇԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

1. Ո՞rտեղ կարելի է պարապել բամբակագործութեամբ.

Բամբակագործութեամբ կարելի է պարապել Անդրկովկասի բոլոր այն հարթութիւնների վրայ, որոնք ունեն Սև ծովի մակերևոյթից մինչև 3000 ոտնաչափ, իսկ Երևանեան նահանգում՝ մինչև 3500 և նոյն իսկ 4000 ոտնաչափ բարձրութիւն։

Բամբակագործութեամբ չի կարելի պարապել միայն այնպիսի տեղերում, ուր գալիս են չափազանց շատ անձրևներ, ինչպէս, օրինակ, Բաթումի շրջանում, Սևծովեան նահանգի Սոչիի շրջանում կամ, օրինակ, Լենքորան գաւառի հարաւում, որովհետև աւելորդ անձրևների շնորհիւ, մանաւանդ աշնանը—սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին,—բամբակը չի հասնում և նրա յատկութիւնը փչանում է։

Աշնան առատ անձրևներից տրանջում են

յաճախ նաև Բագլայ նահանգի Ղուբայի գաւառում և Գանձակի նահանգի Նուխայ գաւառում, ուստի այդ տեղերում անհրաժեշտ է բամբակը ցանել առուներով—թմբերի վրայ, որպէսզի աշնանային աւելորդ անձրևները շատ վնաս չհասցնեն։ Այդպիսի նախազգուշութեան միջոցով հաւանական է, որ բամբակագործութիւնը հնարաւոր դառնայ նաև Լենքորան գաւառի հիւսիսային մասում, այսինքն Բոլգարուչայ գետի կից բայոններում, ինչպէս, օրինակ, Անդրէևկա, Նովոդոլկա և այլ գիւղերում։ Վերջին տարիներս՝ բամբակի սաստիկ թանգանալու պատճառով՝ բամբակագործութեամբ աշող կերպով սկսեցին պարապել տեղ-տեղ նաև Հիւսիսային Կովկասում, ինչպէս, օրինակ, Թերեքի նահանգի Խասաւ-Իւրտի շրջանում, Կուբանի նահանգում և այլն։ Էլ աւելորդ է ասել, որ ոչ պակաս աշողութեամբ կարելի է պարապել բամբակագործութիւնով Սղնախի և Թէլաւի գաւառներում, Ալազանի հովտում, տեղ տեղ Իօրա գետի շուրջը, առաւել ևս Թիֆլիսի նահանգի Լագոդեխի բայոնում և Զաքաթալայի շրջանում։

Վերջին թւած բոլոր բայոններում գալիս են բաւական անձրևներ, ուստի այդ տեղերում կարելի է պարապել բամբակագործութեամբ առանց արհեստական ոռոգման, առանց բոլորովին ջրելու։ Վերջապէս Հողաշինութեան Դեպարտամենտը վերջին տարիները սիստեմատիկ փորձեր է անում բամբակագործութիւնը մտցնելու նաև Ռուսաստանի հարաւում, Բեսսարաբիայի, Խերսոնի, Տաւրիկեան և այլ նահանգներում։

2. Տեղի ընտրութիւնը.

Բամբակին յատկացրած տեղն ամբողջ օրը պէտք է լինի արևի տակ. այսինքն պէտք է ազատ լինի ծառերի, շինութիւնների և նոյն իսկ բարձր ցանկապատերի ստուերից։ „Բամբակի բոյսն արևի զաւակ է“, ինչպէս ասում են ամերիկացիք, ուստի և ամենից աւելի նա արևի կարիք ունի։ Աւելի ևս լաւ է, առանձնապէս ջրարբի վայրերում, որ բամբակի դաշտը փոքր ինչ թեքութիւն ունենայ դէպի հարաւ, հարաւ-արևմուտք կամ հարաւ-արևելք։ Զրովի տեղերում, մանաւանդ երբ հողը կաւոտ է և պինդ, այդպիսի զգալի թեքութիւն ունեցող արտերն աւելի հեշտ են ջրւում. ջուրը նրանց մէջ չի լճանում և դրա համար էլ հողը լինում է աւելի ցամաք, տաք ու փուխր, քաղախոտը լինում է սակաւ և բամբակը բացւում է աւելի վաղ, իսկ մշակութիւնն էլ աւելի էժան է նստում։ Հողերին այդպիսի թեքութիւն պէտք է տալ նոյն իսկ արհեստական միջոցով, ինչպէս այդ անում են Բուխարայում և Ֆերգանում։ Ամբողջ դաշտերի այդ-

պիսի կանոնաւոր զառիվայր դիրքը խիստ դիւրացնում է արհեստական ոռոգումը. դրա շնորհիւ բոլոր ցանքերը ջրւում են չափազանց կանոնաւոր ու ամենաօրէն, և այդ ամենը մեծապէս նպաստում է բոլոր բերքերի շատանալուն, մանաւանդ բամբակի բերքի։ Իսկ Քութայիսի նահանգում, որտեղ լինում են առատ անձրևներ և հողն էլ առհասարակ աւելի խոնաւ է, բամբակի համար միմիայն այդպիսի հողամասերը կարող են պիտանի համարուել և ցանքն էլ հարկաւոր է անել վերը յիշած ձևով՝ բարձր թմբերի վրայ, ինչպէս այդ անում են Հիւսիսային Ամերիկայի այն բոլոր վայրերում, ուր գարնանը և ամրանը առատ անձրևներ են գալիս։

3. Հողը.

Բամբակի համար ամենից յարմարը՝ թեթև, փուխր և խոտաբոյսերից ազատ հողն է։ Չափազանց լաւ է, եթէ հողի մէջ կայ շատ աւազ և փոքր քանակութեամբ մանր քարեր, որ դարձնում են նրան աւելի փխրուն և աւելի տաք։ Շատ լաւ են նաև այն հողերը, որոնք հարուստ են կրով, նոյնպէս և սևահողերը, ուրիշ խօսքով՝ այն բոլոր հողերը, որոնք Կովկասում բանջարաճոցների—բոստանների համար համարւում են

պիտանի և ընտիր, այսինքն տաք են, փուխր, բերքի և քաղախոտերից ազատ։

4. Հունդը.

Ամերիկական բամբակի ընտիր հունդը-սերմը պէտք է ծածկւած լինի սպիտակ կամ կանաչ աղամազով և երբէք չպիտի լինի մերկ կամ սև կեղևով. վերջին տեսակ հունդն առհասարակ Կովկասի համար շատ պիտանի չէ, որովհետև սև ու մերկ սերմերն առաջացել են կամ եգիպտական տեսակներից, կամ ամերիկական Sea Island (Սի-Այլանդ), այսինքն ծովափնեայ տեսակից, որոնք մեր չոր կլիմային անհամապատասխան են։ Իսկ աւելի յաճախ՝ այդ մերկ սերմերը չհասունացած, խակ սերմեր են, որովհետև բամբակի վերջին երես բերքի մէջ սև, մերկ սերմեր լինում են բաւական քանակութեամբ ամեն տեղ և միշտ։ Ապա լաւ հունդը չպէտք է լինի շատ խոշոր, որովհետև այդպիսի հնդի բամբակը ուշ է բացւում և հնդաւորից (կորիզով) տալիս է համեմատաբար աւելի փոքր տոկոս մանրուած—մաքրած բամբակ. վերջապէս խիստ ցանկալի է, որ հունդը լինի վաղահաս տեսակի, ինչպիսին է յայտնի „կինդ“ տեսակը, որը համարեա ամբողջ մի ամսով աւելի շուտ է բացւում, քան միւս տեսակները և տալիս է աւելի մեծ տոկոս ման-

լուճ, այն է 33—34%, փոխանակ միւս տեսակների սովորական 28—30%-ի։

Իսկ սերմացու հնդի որակը, այսինքն ծլելու ընդունակութիւնն իմանալու համար, պէտք է լայնութեամբ կիսել մի քանի հունդ և դիտել։ Առողջ սերմերի միջուկը լինում է բաց գոյնի՝ պարզօրէն նկատելի սև կէտերով, իսկ թուխ կամ մոխրագոյն միջուկներով հունդը անպէտք է ցանելու համար։

5. Հողի մշակութիւնը.

Բամբակի համար հողի մշակութիւնը պէտք է սկսել աշնանից և վարել գութանով 4 վերշոկ խորութեամբ, իսկ գարնանը կրկնավար անել արօրով կամ „չութով“, ապա ցաքանել, հաւաքել ինքնակար խոտերը (չահիրը) և յետոյ ցանել։ Իսկ եթէ աշնանը չի յաջողուել վարել, ապա պիտի աշխատել վարել որքան կարելի է շուտ,— Յունուարին, Փետրուարին կամ գոնէ Մարտի սկզբին։ Սակայն վերջին դէպքում, եթէ հողը պինդ է և խոտակալած, աւելի լաւ է այլևս գութանով չվարել և ամբողջ շերտերով շուռ տալ, որ այնուհետև էլ չի կարող փափկել, այլ հարկաւոր է ճեղքոտել հողը բազմախոփ գութանով (թեթև աւազոտ հողերում) կամ արօրով լայնութեամբ և երկայնութեամբ մի քանի անգամ,

և ինչքան հնարաւոր է՝ խոր։ Բայց անհրաժեշտ է միշտ յիշել, որ որքան լաւ, այսինքն խոր, մաքուր և վաղօրօք հերկուի հողը, այնքան էլ աւելի առատ բերք կտացուի։ Մեր հողերը, մանաւանդ Երևանեան նահանգում, տալիս են շատ չնչին բերք, ոչ միայն նրա համար, որ ուժից ընկել են, այլ և այն պատճառով, որ պնդացել են յաճախակի ջրելուց, կարծրացել, կոշտացել, աղքատացել են։ այդպիսի հողերի բերքը բարձրացնելու համար անհրաժեշտ է պարարտացնել, իսկ դրանից էլ աւելի՝ եռանդուն կերպով և կանոնաւոր մշակել։

6. Ցանքը.

Ամբողջ Անդրկովկասում բամբակ ցանելու ամենալաւ ժամանակամիջոցն է Ապրիլի 10-ից մինչև 20-ը։ Երբ գարունը շուտ է բացւում, կարելի է ցանքն սկսել և Ապրիլի 1-ից, բայց վերջացնել անպայման հարկաւոր է Մայիսի 1 ից ոչ ուշ. ապա թէ ոչ բամբակի բոյսի հասունանալը յետ կընկնի և լիակատար արդիւնք չի տայ։ Անհրաժեշտ է բամբակը ցանել կանոնաւոր շարքերով՝ մէկը միւսից 1—1 1/4 արշին հեռաւորութեամբ, իսկ շարքերում՝ մի բոյսը միւսից թողնել 6—8 վերշոկի վրայ։ Այդ կարգի հեռաւորութիւններով մի դեսեատինում պէտք է ցանել

2—2½ փութ հունդ և երբէք 3 փթից աւելի։ Իսկ աւելի լաւ է ցանել ձեռքով՝ բուն—բուն, իւրաքանչիւր բնում քցելով 2—3 սերմ. այն ժամանակ կպահանջւի 30—35 գր. հունդ կամ 1 փթից ոչ աւելի։ Երբ բամբակը շաղացան է անւում, մի դեսեատինում ցանւում է 6—8 փութ. մինչև անգամ 10 փութ. իսկ որովհետև այժմ լաւ հունդն արժէ փութը 1 մանէթից ոչ պակաս, հետևապէս 6 - 8 բուբլի աւելորդ ծախս է լինում հենց միայն սերմի վրայ։ Ինքը՝ շաղացանը, ճիշտ է, էժան է նստում, բայց մնացած բոլոր աշխատանքները, ինչպէս քաղհանը, չանագը (բամբակի ժողովելը) և այլն, անհամեմատ աւելի թանգ է լինում, քան շարքացանինը։

Բամբակի շարքացանը, որ համեմատած շաղացանի հետ շատ աւելի կանոնաւոր է, խիստ դիւրացնում է մշակութեան և խնամքի բոլոր աշխատութիւնները, ինչպէս, օրինակ, քաղհանելը, ջրելը, չանագելը, և այդ աշխատանքները հեշտութեամբ կարող են կատարել նաև կանայք. մինչդեռ շաղացնում այդ շատ դժւար է, շնորհիւ կանացի հագուստի։

Բացի այդ, շարքացանում բամբակի բոյսերն աւելի կանոնաւոր կերպով են օգտւում արեգակի լոյսից, մանաւանդ երբ հողի թեք ածքը՝ ջրի ընթացքով թոյլ է տալիս շարքերը քցել հիւսիսից հարաւ, իսկ դրանից բամբակը և աւելի

շուտ է բացւում, և աւելի շատ բերք է տալիս. արտն էլ ամառւայ ընթացքում պահանջում է աւելի քիչ ջուր, որ նոյնպէս չափազանց կարևոր է։

Բամբակը կարելի է շարքերով ցանել ամերիկական Բաններով միաձի շարքացան մեքենայով (այդ մեքենաները ծախւում են Թիֆլիսում. Աւերֆերմանի և Ուացի մօտ. կամ Դոյս. Կովկ. Գիւղ. Ընկ. մօտ հատը 35 բուբլի), կամ ձեռքով՝ նախապէս արօրով պատրաստած ակօսների մէջ։ Բամբակի ցանելն ամենակարևոր աշխատանքներից մէկն է, որովհետև կանոնաւոր կերպով կատարւած ցանքը կիսով չափ ապահովում է բամբակի լաւ բերքը։ Բամբակի սերմը հարկաւոր է թաղել քիչ խորութեամբ՝—½ վերշոկ և ոչ մի դէպքում 1 վերշոկից աւել. սերմերը կարելի է ծածկել հողի մէջ ցաքանով կամ փոցխով, այսպէս կոչւած „տափանով“, այսինքն յատուկ տախտակով, որ քաշ են տալիս մի զոյգ եղներ կամ ձիեր։ Երբէք չպէտք է դիմել ցանելու երբեմն գործադրւող այն վայրենի ձևին, երբ հունդը համարեա բռով էին լցնում, որպէսզի այդ միջոցով մաքառեն հողի երեսը կեղևակալելու (դասնաղելու) դէմ։ Աւելի լաւ է ցանելուց առաջ նախօրօք ջրել կամ ընները պարարտացնել աղբով, աւազով, քան թէ հունդը բռով լցնել, որով-

հետև իւրաքանչիւր բնի մէջ վերջում լինելու է մէկ—երկու բոյս, իսկ աւել՝ երբէք։

7. Ջրելը.

Եթէ հարկաւոր է լինում բամբակը ցանելիս ջրել, ինչպէս անում են Թիֆլիսի, Դանձակի, Բագւայ և Երևանի նահանգներում համարեա ամենուրեք, այն ժամանակ ցանկալի է պատրաստի արտը նախ ջրել, այսպէս ասած, „արաթ՝ անել. 2—3 օր յետոյ, երբ հողը փոքր ինչ կը-ցամաքի, երեսանց կրկին արօրել և ապա արդէն ցանել։ Բայց այդ աշխատանքն յաջողութեամբ կատարելու համար անհրաժեշտ է, որ արտը լինի հարթ, որպէսզի համահաւասար ջրվի. ապա թէ ոչ՝ կանոնաւոր կերպով չի ցամաքի, մի տեղ շուտ կչորանայ, իսկ միւսը կմնայ խոնաւ, որի պատճառով ցանքն անաջող դուրս կգայ։ Եթէ արտը նախապէս ջրւում է (արաթ), ապա ցանելուց մէկ կամ երկու օր առաջ հարկաւոր է հունդը ջուրը դնել, որպէսզի շուտ ծլի։

Այս ձևով ջրելու դէպքում, եթէ յաջող է արւած, արտում զանազան մանր քաղախոտեր անհամեմատ աւելի քիչ կլինին, հողը կմնայ փուխր ու հաստ կեղև չի կապի, և առհասարակ բամբակի բոյսերը կկանաչեն ու կաճեն աւելի ներդաշնակ կերպով և աւելի առողջ. վերջապէս, այդպիսի արտը հարկաւոր չափով խոնաւութիւն կպահպանի իր մէջ աւելի երկար ժամանակ, քան այն դէպքում, երբ ջրւում է ցանելուց յետոյ։ Եթէ արտը ջրելու է ցանելուց յետոյ, ապա էլ աւելորդ է նախապէս հունդը ջրի մէջ դնել։ Հարկաւոր է միայն փոքր ինչ թրջել, որ կարելի լինի տրորել աւազով, մոխրով կամ փէյնով դիւրութեամբ ցանելու համար։

Արևելեան Անդրկովկասում, ընդհանրապէս ասած, հարկաւոր է լինում բամբակը ջրել։ Եթէ որևէ տեղ, հողի կամ կլիմայի խոնաւութեան պատճառով և կամ անձրևների շնորհիւ, կարելի է լինում բամբակը ցանելիս չջրել, ինչպէս, դիցուք, Քութայիսի նահանգում, Զաքաթալայի շրջանում. Կախեթիայում, ապա այդպիսի վայրերից շատերում կարելի է բամբակի շատ լաւ բերք ստանալ առանց բոլորովին ջրելու։ Ցամենայն դէպս, բամբակը հարկաւոր է ջրել միշտ մեծ զգուշութեամբ և համարեա միշտ աւելի լաւ է ջրել չափաւոր, քան առատօրէն, առանձնապէս ամառւայ վերջում, Օգոստոս ամսին։ Առհասարակ չպէտք է մոռանալ, որ ջրելը պնդացնում ու սառեցնում է հողը և նպաստում է երեսը կեղևակալելուն, որ յետոյ ճաքեր է տալիս և միաժամանակ ուժեղացնում է նաև քաղախոտերի զարգացումը։

Ուստի եթէ յոյս կայ, որ բամբակը կարող է լաւ կանաչել առանց ջրելու, ապա այդ պիտի համարել աջողութեան առաջին քայլը։ Այսպէս, օրինակ, Ղարայեազի փորձադաշտում համարեա ամեն տարի աջողւում է բամբակը լաւ կանաչացնել առանց արհեստական ոռոգման, որովհետև ցանքի ժամանակ, այսինքն մօտաւորապէս Ապրիլի կիսին, համարեա միշտ անձրևներ են գալիս, և հողն առանց ջրելու էլ՝ կանաչելու համար ունենում է բաւական խոնաւութիւն։ Այդպիսի ցանքեր աջողութեամբ անւում են Անդրկովկասի նաև ուրիշ վայրերում։ Ընդհանրապէս ասել թէ Անդրկովկասում քանի անգամ հարկաւոր է բամբակը ջրել՝ այդ բաւական դժուար է. Քութայիսի նահանգում բամբակն ամենևին չի ջրւում։ Այդպէս էլ՝ առանց բոլորովին ջրելու՝ ստացել են բամբակի թէ քանակով և թէ յատկութեամբ գերազանց բերքեր Թիֆլիզի նահանգի Լագոդեխի բայօնում։ Մուղանում բամբակի հողը լաւ կշտացնում են առատ ջրով (лѣтнее орошеніе) ընդամենը մի անգամ ցանելուց առաջ և այլևս չեն ջրում։ Իսկ Բաքայ նահանգում տեղ տեղ, ինչպէս, օրինակ, Սալեանի մօտ, բամբակը ջրւում է տարեկան երկու անգամ, բայց պէտք է նկատել, որ երկրորդը բոլորովին աւելորդ է, որովհետև դա միայն զօրացնում է քաղախոտը և նւազեցնում պտղաւորութիւնը։

Այնտեղ մէկ անգամ ջրելով էլ բամբակի համար լինում է բաւական խոնաւութիւն, անհրաժեշտ է միայն հողը յաճախ փուխրացնել։ Գանձակի նահանգում ջրում են 2—3 և 4 անգամ։ Նոյնն անւում է նաև խիստ քամոտ և չորային Ղարաեազում։ Եղել են տարիներ, երբ Ղարաեազի փորձադաշտում բամբակը ջրւել է ընդամենը երկու անգամ։ Անդրկովկասի բոլոր վայրերից ամենից շատ բամբակը ջրւում է Երևանեան աւելի բարձրադիր ու չորային նահանգում, որտեղ հազիւ է պատահում, որ բաւականանան 4—5 անգամ ջրելով. յաճախ ջրում են մինչև 10 անգամ և դեռ աւելի։ Բայց այդ ձևն անպայման պէտք է համարւի անկանոն. բամբակը հարկաւոր է սակաւ ջրել և աւելի յաճախ փուխրացնել։ Ամերիկացիք ուղիղ են ասում, որ ծոյլ տէրը միշտ ջրում է, իսկ գործունեան մշակում է—փուխրացնում ձիով կամ ձեռքով։ Բուխարայում և Թուրքեստանում բամբակի առաջին ջուրը տալիս են ցանելիս կամ յաճախ՝ այսպէս ասած—„սրաթ“ են անում,—ջրում են նախ քան ցանելը և ապա աշխատում են չջրել մօտ 60 օր, իսկ այնուհետև ջրում են կանոնաւորապէս իւրաքանչիւր 20 օրը մի անգամ։ Բայց առաջին ջրից մինչև երկրորդն աշխատում են չջրել ցանքը և թողնում են [illegible] աշխատակալի։

Անդրկովկասում վերջին ջուրը պէտք է տալ

1007
39342
Ա. Ա. Մասնիկյանի անվան

Օգոստոսի 10—15-ից ոչ ուշ. սակաւ դէպքերում ու քիչ տեղերում կարելի է ջրել Օգոստոսի վերջերին և Սեպտեմբերի սկզբներին, սակայն այդ էլ արդէն շատ ուշ է, որովհետև ուշացած ջուրը կարող է յետաձգել բամբակի բացւելը. բամբակի բոյսերը չեն հասունանայ և աշնան վաղահաս ցուրտը—շախտան կտայ նրանց։

8. Բամբակի խնամքը.

Եթէ ջրելուց կամ անձրևներից հողի երեսը կեղև է գոյանում, որի տակից բամբակի մատաղ ու քնքոյշ ծիլերը չեն կարող դուրս գալ, ապա անհրաժեշտ է փոցխով կամ „տափանով“ փշրել այդ կեղևը և որքան կարելի է շուտ։ Յանելուց յետոյ բամբակի բոյսերն աճում են խիստ դանդաղօրէն, այդ պատճառով ամեն միջոցներով պէտք է նպաստել, որ նրանք աւելի թափով զարգանան. դրա համար անհրաժեշտ է կանաչելուց մէկ կամ ամենաուշը երկու շաբաթ յետոյ՝ նոսրացնել բամբակի բոյսերը, եթէ խիտ են, և նրանց հնարաւորութիւն տալ շուտ և լաւ զօրանալու քաղախոտերը պէտք է մաքրել հիմնովին և հողն անպայման փուխրացնել, որ նոյնպէս նպաստում է բամբակի բոյսերի արագ և առողջ աճմանը։ Երբ բոյսերը միմեանցից բաւարար չափով հեռաւորութիւն ունեն, նրանք աւելի հեշտութեամբ և շատ են ճիւղաւորւում, իսկ այդ ճիւղերի վրայ է, որ ստացւում է բամբակի համարեա ամբողջ բերքը։ Եթէ որև է տեղացանքն անւում է շարքերով բուն—բուն՝ շախմատաձև կամ քառակուսի, ապա հարկաւոր է բոյսերի արանքը՝ երկու կողմի վրայ էլ թողնել մի արշինից ոչ պակաս, որպէսզի կարելի լինի մէջը ձիով աշխատել, իսկ իւրաքանչիւր բնում թողնել երկու բոյսից ոչ աւել, որովհետև երեքն արդէն միմեանց ճնշում են և բերքը պակաս է լինում։

Յամենայն դէպս ամառւայ ընթացքում արտը անպայման պէտք է մի քանի անգամ խնամքով և լաւ փուխրացնել, այսինքն ամբողջ հողի երեսը խրխրել հաւասարապէս, բայց ոչ այնքան խոր, 1 վերշոկից ոչ աւել։ Այդ աշխատանքն առանձնապէս կարևոր է նրա համար, որ լոյսն ու օդը աւելի մեծ չափով են մատչելի դառնում հողին, որով արագանում է բոյսերի աճումը և դրա հետ միաժամանակ պակասում է հողի ներսից խոնաւութեան գոլորշիացումը, իսկ այդ բոլորը միասին նպաստում են բամբակի աճեցողութեան, հասունանալուն և առատ պտղատւութեան։ Շարքացան արտերում՝ միջանցքների փուխրացնելը շատ հեշտ, յարմար և էժան կերպով կատարւում է այսպէս կոչւած քաղհանիչ—բուգլից*)

*) Այդ գործիքը (пололникъ·окучникъ) ծախւում է Թիֆլիզում 25—30 ր.

գործիքի օգնութեամբ մի ձիով կամ մի զոյգ եզով *)։ Ձիու այդպիսի մի քաղհանիչը կարող է փոխարինել ձեռքի ուրագներով (թոխիկներով) աշխատող 20 բանուորի։ Որտեղ ձի չկայ՝ կարելի է բանեցնել մի զոյգ եզով, որոնց լծի երկարութիւնը պէտք է անել երեք շարքի միջանցքներին հաւասար, որպէսզի եզները գնան երկու կողքի միջանցքներով, իսկ քաղհանիչ մեքենան, մաճը բռնող բանուորի հետ միասին, նաև եզներին առաջնորդող, քաշողը անցնեն մէջտեղի միջանցքով։ Այդ աշխատանքը ձիով կատարւում է աւելի արագ և հեշտութեամբ, բայց, ինչպէս ասւեց, ձի չունեցած դէպքում կարելի է աշխատել նաև եզներով։ Իսկ բացառապէս ձեռքի աշխատանքը, որ մինչև այժմ գործադրում են Անդրկովկասի բոլոր տեղերում, միանգամայն ցանկալի չէ։ Ձիով գործիքների գործածութիւնը շատ սիրուն կերպով պատրաստում է հողը նաև բամբակից յետոյ ցանւող յաջորդ բոյսերի համար, որոնք միջանցքների հողի փուխրանալու շնորհիւ նոյնպէս գեղեցիկ բերք են տալիս։ Առհասարակ այդ գործիքները տնտեսութեան մէջ դերազանցօրէն անհրաժեշտ են ամեն տեսակ շարքացան

*) Կան և ձեռքի քաղհանիչներ, 16—18 բուբլի արժողութեամբ, Խարկովում և Ռոստովում Հելֆերիխ Սադէի մօտ, որոնք թեթև են և կարող են մարդիկ բանեցնել։

բոյսերը մշակելիս—խաղողի վազեր, ծխախոտ, եգիպտացորեն, բանջարանոցային բոյսեր, պըտղատու ծառեր և այլն։

Երբ գործն այդ ձևով է տարւում, ձեռքի ուրագներով կամ թոխիկներով թանգարժէք աշխատանքը մնում է գործադրել միայն բոյսերի արանքում, բոյսերի շուրջը, որով ամբողջ մշակութիւնն անհամեմատ աւելի էժան է նստում և պահանջում է աւելի քիչ բանուոր ձեռքեր։ Շարքացանն էլ յանձնարարւում է հէնց այն նպատակով, որ նւազի բանուոր ձեռքերի թիւը և կրճատւեն առհասարակ մշակութեան ծախսերը։ Բայց բանուոր ձեռքերի թիւն էլ աւելի պակսեցնելու և մինիմումին—ամենաքչին հասցնելու համար՝ պէտք է բամբակի շարքացանն անել շախմատաձև. այդպիսի ցանքում ձիով մշակութիւնը հնարաւոր է կատարել թէ երկայնութեամբ և թէ լայնութեամբ, որով ձեռքի աշխատանքը համարեա ամբողջովին կփոխարինւի ձիու մեքենայական աշխատանքով և մշակութիւնն էլ աւելի էժան կնստի։ Բամբակի արտը ձիով միապաղաղ կերպով պէտք է փուխրացնել անպայման իւրաքանչիւր անգամ, երբ ջրւում է կամ սաստիկ անձրևներ են գալիս, հէնց որ հողը ցամաքի այնքան, որ սկսի փխրւել և չկպչել գործիքին, այսինքն, երբ քէշը գայ. փուխրացնելը հնարաւորութեան չափ պէտք է յաճախ կրկնել, ոչ սա-

կաւ, քան իւրաքանչիւր 2—3 շաբաթը մի անգամ, մինչև որ բամբակի ճիւղերը խանուեն միմեանց։

9. Ծայրեր տալը.

Բամբակի հասունանալն արագացնելու և պտղաւորութիւնն աւելացնելու համար՝ խիստ օգտակար է ցօղունների ծայրերը կմճել կամ կտրել, երբ նրանք հասնին $^3/_4$—1 արշին բարձրութեան։ Բայց այդ պիտի անել Յունիս ամսի առաջին կիսում և Յուլիսի 1-ից ոչ ուշ, ապա թէ ոչ բամբակը կըմնայ խակ, հետևապէս այդ միջոցը օգուտի փոխարէն միայն վնաս կտայ։

10. Հիւանդութիւններ եւ վնասատուներ.

Բամբակի հիւանդութիւններից ամենալուրջը և Անդրկովկասում ամենատարածուածը հանդիսանում է „չոռ“ կամ „աղ“ կոչուած ժանգը, որի ժամանակ կարմրում կամ մթագնում են բամբակի նախ տերևները, ապա ցօղունները ու պըտուղները։ Այնուհետև տերևները ու մատղաշ կնդուզները թափւում են, իսկ խոշորները չեն հասունանում և չորանում են։ Այդ հիւանդութիւնն ամենից յաճախ նկատւում է ջրի լճացած տեղերում կամ երբ հողն ուժից ընկած է, և

առհասարակ վատ ու անփոյթ մշակութեան դէպքում։ Հետևապէս բամբակի աւելի աշխուրջ մշակութիւնը և դաշտի պարարտացումն ամենալաւ միջոցներն են այդ հիւանդութեան դէմ։ Կարմիր ժանգի ժամանակ, որ սովորաբար յայտնւում է շոգ ու չոր ամրանը կամ տաք ու չոր քամիներից յետոյ, տերևների ստորին երեսի վրայ բազմանում են մանրիկ միջատներ (клещики), որոնք ծծում են տերևների հիւթը և դրանով արագացնում բոյսի չորանալը։ Այդ միջատների դէմ Երևանեան նահանգում վերջին երկու երեք տարիներն սկսել են մեծ չափով գործադրել ծծմբափոշիով բժշկութիւն, այսինքն Վերմորելի, այսպէս կոչուած, տորպիլներով բամբակի բոյսերի վրայ փչում են ծծմբի փոշի, ինչպէս որ անում է խաղողի վազերը բժշկելու ժամանակ։ Եթէ այդ միջոցը գործադրւում է իր ժամանակին, այն է վաղ առաւօտեան, երբ բոյսերի վրայ դեռ ցօղ կայ և անում է խնամքով, տալիս է աջող հետևանք։ Բայց աւելի լաւ արդիւնք է ստացւում, երբ բժշկութիւնը լինում է ոչ լոկ միայն ծծումբով, այլ Փարիզեան կանաչի և կրի հետ խառն, այն է 1 գրամանքայ կանաչ, 2 գրամանքայ կիր և 6 գրամանքայ ծծմբափոշի։ Այդ դէպքում միջատները ոչնչանում են վերջնականապէս։ Սակայն այս վերջին բժշկութիւնը, համեմատած առաջինի հետ, նստում է երկու անգամ աւելի

թանգ, այսինքն մի դեսեատինին 15 բուբլի, մինչդեռ առաջինը 7—8 բուբլի ծախս է պահանջում։ Որովհետև վերջին բեցեպտով՝ դեղի բաղադրութեան մէջ կայ նաև կիր, ուստի սրա գործադրութիւնը շատ նպաստաւոր է բամբակի և մի այլ հիւանդութեան վերաբերմամբ, այն է անտրակոզնի սունկի դէմ, որ երբեմն նոյնպէս խիստ տարածւում է, դիցուք 1910 թ. Բորչալուի գաւառում, մասնաւորապէս Ցուրինեան պլատֆորմի բայսնում, որտեղ անտրակնոզը ոչնչացրեց տեղ տեղ բամբակի բերքի մինչև 20 տոկոսը։ Անտրակնոզի դէմ, որ ճարակում է բամբակպտուղները, յանձնարարւում է կիր փչել կնգուղների վրայ նոյն ձևով, ինչպէս անւում է ծծմբափոշիով բժշկելիս։

Բամբակի վրայ ամենատարածած ցնաստուներից մէկը հանդիսանում է պղտաճիճուն, որ պտուղներն է ուտում, յատկապէս մատղաշները, այդ պատճառով նա աւելի վտանգաւոր է դառնում, երբ արտը ջրւում է շատ։ Ցուրտ և խոնաւ եղանակին, բամբակի տերևների տորին երեսի վրայ երևան է գալիս ափիսը (շիրինա), որ պաղ և կաւային հողերում, նաև աւելորդ չափով ջրելիս, շարունակում է մնալ յամառօրէն և երկար ժամանակ. սա նոյնպէս խիստ կանգնեցնում է բամբակի աճեցողութիւնը։ Շիրինայի դէմ ոմանք յանձնարարում են գործադրել կլասսիայի հեղուկ,—4 գրանքայ կլասսիա և 2 գրանքայ սապոն 10 վեդրո ջրի մէջ։ Պատրաստելու եղանակը հեռևեալն է. 4 գրվ. կլասսիան եռացնում են 3 վեդրո ջրի մէջ երեք ժամից ոչ պակաս և 2 գր. սապոնը լուծում են 2 վեդրո ջրում, ապա երկու հեղուկները խառնում են միմեանց և աւելացնում 6 վեդրո ջուր։ Սակայն այդ լուծուածքի գործադրութիւնը չափազանց դժուարանում է նրանով, որ բամբակն այդ ժամանակ լինում է շատ փոքր հասակի, ընդամենը մի քանի վերշոկ, որի համար սրսկելը դառնում է շատ մժուլ և ծանր աշխատութիւն։

11. Սերմացու հունդ վերցնելը.

Սերմացուի ընտրութիւնը բամբակագործութեան աջողութեան համար ունի ահագին նշանակութիւն։ Եթէ ամեն տարի սիստեմատիքաբար լաւ հունդ ընտրի ցանելու համար, այսինքն վերցի լաւ բամբակաբոյսերից—ամենապտղատուներից և շուտ բացուածներից,—և այն էլ ոչ թէ ամբողջ բոյսի վրայից, այլ միայն նրա միջին մասերից կամ տորին ճիւղերից, որտեղ միշտ ստացւում են աւելի խոշոր և լաւ հասած կնգուղներ—դրանով կարելի է նշանաւոր չափով բարելաւել բամբակի վաղահասութիւնը, բերքատուութիւնը և նրա որակը։

Յամենայն դէպս ցանելու համար պէտք է վերցնել միայն լաւ հասած և չոր հունդ և միշտ բոյսի ստորին կէսից՝ շուտ հասածները, կամ թէ չէ՝ միջին և ստորին մասերից։ Ընդհակառակը, երբէք չպէտք է ցանել վերջին երեսի հունդը, բոյսի վերին մասերից, որոնք սովորաբար լաւ չեն հասունանում և տալիս են ընդհանրապէս մանր ու վատ պտուղներ։ Բամբակի ամենալաւ սերմացուն այն հունդն է, որ ստացւում է սեփական տնտեսութեան մէջ, այսինքն նոյն հողերից և նոյն պայմաններում առաջացած, որտեղ յետագայում անելու է ցանքը։

12. Սերմացու հունդ գնելը.

Եթէ հարկաւոր է լինում բամբակի սերմացուն գնել ուրիշ տեղից, ապա պէտք է գնել ամենալաւը, ընտիրը, շուտ բացւողը և ամենալաւ տնտեսութիւններից։ Ներկայումս Անդրկովկասի և Թուրքեստանի ամենալաւ հունդը „կինգ“ վաղահաս տեսակի սերմն է, որ միւս տեսակներից շատ առաջ է բացւում և տալիս է 3-6 տոկոս աւելի մանրուճ բամբակ։ Այդպիսի հունդ ստանալու համար պէտք է դիմել ամենից առաջ պետական բամբակի դաշտերին, որովհետև այժմ բոլոր բամբակ առնողներն՝ իմանալով այդ հնդի ահագին պահանջը և բարձր գինը՝ իրանց ունեցած բամբակի բոլոր սերմերն անուանում են „կինգ“, ինչպէս Անդրկովկասի գինեվաճառները, որոնք ամեն տեսակի գինի տալիս են Կախէթի գինու տեղ։ Ընդհակառակը, երբէք չպէտք է հունդը գնել բամբակահան գործարաններից (չըղատներից), որտեղ հաւաքւում են բամբակի սերմեր զանազան նահանգներից, այլ և այլ բայօններից, զանազան մարդկանցից, բամբակի տարբեր երեսներից և այդ բոլորը կուտակւում են միատեղ, ուր յաճախ պատահում են խոնաւ սերմեր, որից նրանք տաքանում են, փթում և ծլելու յատկութեամբ՝ ցանելու համար անպէտք են դառնում։

Այժմ Թուրքեստանի մէջ չրղատներում ցանելու հունդը ծախւում է փութը 80—90 կոպէկից ոչ պակաս, իսկ մեծ քանակութեամբ երկաթուղով Անդրկովկաս բերել տալու ժամանակ՝ ճանապարհածախսով և մէշոկներով՝ նստում է փութը 1 ր. 60 կ.։ Ոչ մի մասնաւոր անձնաւորութիւն և ոչ մի դէպքում չպէտք է բամբակի սերմ ստանայ Ամերիկայից կամ Եգիպտոսից, ապա թէ ոչ՝ սերմի հետ միասին հեշտութեամբ կարող է ներմուծել մեր երկիրը վտանգաւոր հիւանդութիւններից մէկն ու մէկը, և կամ, որ աւելի վատթար է, մեքսիկական երկայնակնճիթ բզէզը։ Այն ժամանակ Ռուսաստանում մեր բամբակագործութիւնն ուղղակի կոչնչանայ։

13. Հողի ուժասպառությունը.

Ոչ մի բույս այնպէս սակաւ չափով ուժասպառ չի անում հողը, ինչպէս բամբակը, եթէ նրա բերքից հունդն ու ցողունները վերադարձուն իրան՝ իբրև պարարտութիւն, այսինքն եթէ հողը պարարտացնի բամբակի ցողունների մոխրով և անասունների աղբով, որոնց համար իբրև կերակուր գործադրուած է եղել բամբակի հունդը։ Բայց երբ հողից վերցնում է և բամբակը, և ցողունները, և հունդը, իսկ հողին ոչինչ չի վերադարձնում, ապա այդպիսի պայմանների մէջ բամբակը շատ սաստիկ կուժասպառի հողը, ինչպէս այդ տեսնում ենք Անդրկովկասի բոլոր տեղերում, մանաւորապէս Երևանեան նահանգում, ուր բամբակի բերքը հողի ուժասպառութեան շնորհիւ շատ է իջել և բույսն էլ խիստ հիւանդանում է „չոռից“։ Մեզանում ամեն տեղ բամբակի դաշտերը խիստ ուժասպառուում են, որովհետև ամբողջ հունդը և քուսպը արտահանուում է Ռուսաստան և արտասահման, իսկ մեր անասունները ՃՈՒՄ են սոված և կերի պակասութեան պատճառով ոչնչանում են։ Ուստի, որպէս զի բամբակի դաշտերը շատ չուժասպառուեն, անհրաժեշտ է խստացնել հունդն արտահանելու միջոցները. այն ժամանակ հունդը մեզանում աւելի էժան կլինի և կգործադրուի անասունները կերակրելու և դաշտերը պարարտացնելու համար, ապա թէ ոչ՝ դրամատէրերն ու գործարանատէրերը հարստանում են, իսկ երկիրն աղքատանում է։

14։ Հողի պարարտացումը.

Որպէս զի բամբակի բերքը չընկնի, այլ բարձրանայ և որպէսզի հողը չուժասպառուի, չաղքատանայ, այլ հարստանայ, անհրաժեշտ է նրան պարարտացնել ամեն տեսակ աղբով, խոշոր ու մանր եղջիւրաւոր անասունների և ձիու փէյնով. կարելի է պարարտացնել նոյնպէս մոխրով, կրով, առուների տիղմով, զանազան բուսական մնացորդներով և զիբիլով, որոնք խիստ փուխրացնում են հողը, աւելացնում նրա արգասաւորութիւնը և արագացնում են բամբակի բացուելը։ Հանքային պարարտանիւթերից ամենից աւելի կարևոր են ֆոսֆորաթթուտային պարարտութիւնները, որոնք շատացնում են բամբակի հասունանալը, նաև բորակայինները, որոնք շատացնում են բերքի քանակը։

15. Բամբակի ցանքափոխությունը.

Երբ միևնոյն հողի վրայ մի քանի տարի շարունակ և անընդհատ բամբակ է ցանուում, մանա-

ւանդ առանց պարարտացման, բերքն արագօրէն պակասում է թէ հողի ուժասպառումից—աղքատանալուց և թէ յոգնածութիւնից, այսինքն հողի միակողմանի սննդաւորութիւնից։ Ուստի երբէք այդ ձևով չպիտի վարուել, այլ հարկաւոր է փոփոխել ցանքը, այն ժամանակ բոլոր բոյսերն էլ լաւ բերք կտան։ Այսպէս, օրինակ, բամբակը լաւ բերք է տալիս եօնջատեղում, խոտատեղերում, բրնձից յետոյ, բոստանատեղում, իսկ բամբակից յետոյ առանձնապէս լաւ են լինում բոլոր հացահատիկները—ցորեն, գարի, եգիպտացորեն և այլն։

16. Քամիներից պաշտպանելը.

Այն տեղերում, որոնք ենթակայ են ուժեղ քամիների, մանաւանդ ամրանը և աշնանը, խիստ ցանկալի է, որ բամբակի արտը լինի զօրեղ քամիների հոսանքի դէմ ձգւած բլուրների, ծառերի կամ ցանկապատերի պաշտպանութեան ներքոյ։

17. Անասուններից պաշտպանելը.

Բամբակի արտն անասուններից ազատ պահելու համար շատ օգտաւէտ է նրա չորս կողմը երկու-երեք կարգ գերչագ ցանել, որին չի դիպչում ոչ մի անասուն, ուստի և բամբակն էլ անվնաս է մնում։

18. Բամբակի չանագելն ու տեսակների բաժանելը

Բամբակը պէտք է չանագել (քաղել, ժողովել) միշտ միմիայն հասած, չոր և լաւ բացւած ղօղաններից (կնգուղներից)։ Միևնոյն ժամանակ անհրաժեշտ է առաջին, երկրորդ և երրորդ երեսների չանագածը ջոկ ջոկ պահել և անպայման առանձին վերցնել այն բամբակը, որի հունդը պէտք է սերմացու լինի և երբէք չպէտք է խառնել միասին ու մի կոյտ դարձնել։

19. Պահելն ու չորացնելը.

Բամբակն անհրաժեշտ է պահել միշտ չոր սրահներում, ուր լաւ քամի է խաղում. խոնաւ և բոլորովին ծածկւած սրահների մէջ բամբակը կարող է տաքանալ և մինչև անգամ այրւել ու փչանալ. խոնաւութիւնից բամբակը կմթագնի, կայրւի, կկորցնի իր արժէքը, իսկ սերմերը կամ կփթեն ու կհոտեն կամ կդառնան բուված սուրճի նման և միանգամայն անպէտք։ Իսկ երբ դեղին ու խոնաւ բամբակն աշնան արևի տակ չորացնում են, նշանաւոր չափով լաւանում է նրա յատկութիւնը, որովհետև աւելի սպիտակում է նա ու գեղեցկանում։

20. Բամբանը ջինով մաքրելը.

Բամբակը հնդից հարկաւոր է մաքրել ջինով—բամբակահան մեքենայով միայն այն ժամանակ, երբ նա լաւ չորացած կլինի, այսինքն երբ հունդը աստիներով սեղմելիս՝ ճաքի, ինչպէս կաղինը, ապա թէ ոչ՝ նա լաւ չի մաքրւի, կկարւի, կբռնի սղոցները և հետևապէս նրա մի մասը կմնայ հողի վրայ և կկորչի իզուր։

Կատաոն-ջինները կամ բամբակը հնդից մաքրող մեքենաները, նայած սղոցների թւին—25—60—80, ծախւում են հատը 300 ռուբլի և աւել, ու մաքրում են մի օրում 30—50—100 փութ և աւելի բամբակ. այդ կախւած է ջինի չինւածքից ու մեծութիւնից և թէ ինչ շարժող ուժով է բանում—ձիով, ջրով, նաւթով թէ շոգիով։

Այն տեղերում, ուր այդպիսի մեքենաներ քիչ են, նորերն առնել առևտրական նպատակով շատ շահաւէտ է, որովհետև դրանցով բամբակ մաքրելու համար իբրև վարձ վերցնում են՝ նայած հանգամանքներին՝ մաքրած բամբակի, երբեմն և սերմի 1/30 ից մինչև 1/20 մասը. մի խօսքով, ջինները տալիս են իրանց տէրերին մեծ արդիւնք, որ շատ անգամ, մէկ կամ երկու ամսւայ ընթացքում, հանում է մեքենայի գինը և տեղը

դնելու բոլոր ծախսերը։ Այդ պատճառով չափազանց կարևոր է և անհրաժեշտ, որ եթէ հնարաւոր է, ջիներ դրւեն Անդրկովկասի բոլոր գիւղերում, ուր բնակչութիւնը պարապում է բամբակի արդիւնաբերութեամբ և երբէք չկենտրոնանան բամբակ առնողների ձեռքում ու կազմեն նրանց համար մենավաճառութիւն. այլապէս, բամբակ առնողներն օգտւելով այդ մեքենաներով՝ իրանց շահերի համար՝ վերջին տարիներս աշխատում են արդիւնաբերողներից գնել ամբողջ բամբակը հնդով, որովհետև այդ դրանց համար միշտ շահաւէտ է. այդ ձևով նրանք գնում են բամբակն աւելի էժան և հունդն էլ մնում է իրանց ձրի։

21. Հունդն իբրեւ անասունների կերակուր եւ պարարտութիւն.

Բամբակը երբէք չպէտք է հնդով, այսինքն առանց մաքրելու, վաճառել, որովհետև անհրաժեշտ է ամբողջ հունդը թողնել տեղում անտեսութեան մէջ. լաւ, ընտիր հունդն անել սերմացու, իսկ մնացածը գործադրել անասունները կերակրելու և բամբակի դաշտերը պարարտացնելու համար։ Բամբակի հնդով կարելի է կերակրել եղներ, գոմէշներ, կովեր, հորթեր և ոչխարներ, տալով հունդը դարմանի հետ միասին. խոշոր

անասուններից իւրաքանչիւրին օրական պէտք է տալ 3—4 գրանքայ, մինչև 5 գր., իսկ ոչխարին՝ օրը 1 գրանքայից ոչ աւել։ Կթող կովերին օրական 3 գրանքայից աւելի չպէտք է տալ, հակառակ դիպուածում՝ կաթն սատանում է անախորժ համ։ Անասունները դրանից շուտով կազդուրուում են, այսինքն դառնում են աւելի ուժեղ, չաղ, մսոտ ու կաթով։ Հնդի քուսպով,— այսինքն իւղը հանելուց յետոյ մնացած չեչով,— կարելի է կերակրել անասուններին աւելի մեծ վստահութեամբ, որովհետև նա սակաւ իւղալի է և աւելի անվտանգ անասունների համար։ Վերջապէս այդ քուսպով ու հնդով կարելի է պարարտացնել արտերը, որովհետև նրանք հարուստ են բորակով և ֆոսֆորի թթուուտով, բայց աւելի օգտակար է նրանով նախ կերակրել անասուններին և ապա անասուններից ստացուած աղբով պարարտացնել դաշտը։ Այդպէս են վարուում գերմանացիք, անգլիացիք և ամերիկացիք։ Իսկ մենք կոպիտ սխալ ենք անում, երբ այդ բոլոր թանկագին նիւթերը բաց ենք թողնում արտասահման—կշտացնելու արտասահմանեան անասուններին և պարարտացնելու նրանց դաշտերը, մինչդեռ մեր անասունները մնում են սոված, յաճախ սատկում են սովածութիւնից. մեր հողերը միշտ աւելի ու աւելի ուժասպառուում են,

բամբակի բերքն ընկնում է, իսկ հնդի գինն արագօրէն բարձրանում։

22. Բամբակի ծախսը.

Անդրկովկասում՝ մեծ մասամբ արհեստական ոռոգումով՝ կանոնաւոր կերպով բամբակ արդիւնաբերելու համար՝ իւրաքանչիւր մի դեսեատինի վրայ արուած ծախսը պէտք է լինի հետևեալը.

		բուբլի.
1.	Հողի աշնան վարը գութանով	10—15
2.	„ պարարտացնելն աղբով, մոխրով, կրով և այլն	8—10
3.	„ գարնան կրկնավարը արօրով կամ չիթով	5— 6
4.	Ցանելուց առաջ ցաքանելը	2— 3
5.	Ցանելը շարքացան մեքենայով կամ ձեռքով	5— 8
6,	Ջրելու համար մարգեր (առուներ) պատրաստելը	2— 3
7.	Բամբակի բոյսերի նոսրացնելը	8—12
8.	Ջրելը 3—4 անգամ	3— 4
9,	Ձեռքի ուրագներով (թոխիկներով) քաղհանելը	25—40

10.	Ձիով քաղհանելու ու հողը փուխ-բացնելը	6—12
11.	Ցօղունների ծայրեր տալը . .	2— 3
12.	Ջանադը—բամբակ ժողովելը—(50—80 փ.)	20—32
13.	Բամբակը ջինով մաքրելը . .	5— 7
14.	Բամբակը դաշտից տուն բերելը.	3 — 5
15.	Հողի կապալը (արենդ) . . .	20—40
	Գումար . . .	124—200

Կամ կլոր թվերով՝ մի դեսեատինի վրայ 125-ից մինչև 200 ռուբլի ծախս։

23. Բանուորի օրավարձը.

Վերջին տարիներս Անդրկովկասում ամեն տեղ բանուոր ձեռքերի արժէքը սաստիկ բարձրացել է և տատանւում է տարբայ զանազան եղանակներին՝ օրական 50—60 կոպէկից մինչև 1 ր.—1 ր, 20 կ. և նոյն իսկ 1 ր. 50 կ.

24. Բամբակի եւ հնդի գինը.

Վերջին երկու տարում բամբակի և հնդի գինը խիստ բարձրացաւ.—հնդաւորը (հնդով բամբակը)՝ փութը 3 ր. և 3 ր. 50 կոպէկից հասաւ

4 ր.—4 ր. 50 կոպէկի, մինչև անգամ 5 ռուբլու, իսկ մահլուճը (մաքրածը)՝ 10 ռուբլուց բարձրացաւ 12—13 եւ վերջապէս 14—15 ր. եւ աւելի։ 1909 եւ 1910 թւերին այդպիսի գներ կային արդիւնաբերութեան տեղերում, Անդրկովկասում և Թուրքեստանում. իսկ Մոսկուայում և Լօձում համապատասխանօրէն $1^1/_2$—2 ր. և աւելի, այսինքն փութը 15—16 ր. և մինչև անգամ 17 ր.։ Այդպէս էլ հնդի գինը, մինչդեռ 1908 թ. իւղի համար փութը ծախւում էր 35—40 կոպ., 1909 և 1910 թւերին բարձրացաւ 50—60 կոպ., իսկ սերմացու հունդը՝ փութը հասաւ 1—$1^1/_2$ ռուբլի, նոյնիսկ 2 –3 ռուբ., և աւելի, մանաւանդ զարնան ցանքի տենդային շրջանում։

25. Բամբակի արդիւնաւորութիւնը.

Անդրկովկասում վերջին տարիներս, չնորհիւ բամբակի նախկին գների համարեա կրկնապատիկ աւելանալուն, բամբակագործութիւնից ստացած արդիւնքը ընդհանրապէս խիստ մեծացաւ և ստեղծեց երկրում բամբակագործութեան կատարեալ տենդ։ Մի դեսեատինից 10 փ. մահլուճ բամբակի բերքը հազիւ կարող է ծախսերը ծածկել. 15—20 փ. բերքից արդէն ստացւում է 100—150 ր. արդիւնք, իսկ 25—30 փ. մահ-

լուծի բերքը տալիս է յաճախ 200—300 ր. զուտ արդիւնք։

1911 թվին Ամերիկայում ստացած բամբակի հնագին բերքի շնորհիւ, որ հասաւ 200 միլիոն փթի, բամբակի գներն ամեն տեղ սաստիկ ընկան —մանրուճին՝ փութը 4—5 ռուբ., իսկ հնդաւորին՝ 1½—2 ր.։ Այդպիսով 1911 թվին՝ 1910 թվի համեմատութեամբ՝ բամբակի արդիւնաբերութիւնը 30—40% պակաս շահ տուեց։



ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀԱՅ. — ССРА
Մ. Ա. Մասիսիանի
Ի ՅԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆ

19.090

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.